Արևելյան Ճապոնիայի մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողություն (Սպիտակ)

Մարտի 11-ին՝ Արևելյան Ճապոնիայի մեծ երկրաշարժից 15 տարի անց, Հայաստանում Ճապոնիայի դեսպան Ն.Գ. պարոն Յուտակա Առկին ներկա է գտնվել երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը Սպիտակ քաղաքում՝ 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնում:

Բացի դեսպան Առկիից արարողությանը ներկա էին նաև հայ պաշտոնյաներ, այդ թվում՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ, ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն պարոն Արամ Ղազարյանը, Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրենի տեղակալ պարոն Արսեն Մկրտչյանը, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ պարոն Սերոբ Գաբրիելյանը, ինչպես նաև փրկարարական անձնակազմը և տեղի բնակիչները:

Արարողության ընթացքում մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին խաչքարերին՝ աղոթելով Արևելյան Ճապոնիայի մեծ երկրաշարժի և Սպիտակի երկրաշարժի զոհերի համար:

Ներքին գործերի նախարարի տեղակալ, ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն պարոն Ղազարյանը և դեսպան Առկին հուշահամալիրի մոտ մեկ րոպե լռությամբ հարգեցին զոհերի հիշատակը

Դեսպան Առկիի ելույթը

Լոռու մարզային փրկարարական վարչության պետ պարոն Սերոբ Գաբրիելյանը և փրկարարական անձնակազմը ծաղիկներ են խոնարհում